— Ահա քո զէնքերը, դրանց բանեցնելու մէջ դու նոյնպէս անվարժ չես մնայ:

Ես ուրախութիւնից այն աստիճան շփոթուեցայ, որ մի խօսք անգամ չգտայ շնորհակալութիւնս յայտնելու միայն երեխայի նման փաթաթուեցայ նրա վզովը եւ սկսեցի համբուրել: Ես երեւակայում էի, թէ աշխարհի բոլոր թագաւորութիւնները ինձ են տուած:

Կարօն տուեց ինձ եւ մի ձեռք շոր, պատուիրեց հագուստս փոխել: Իմ նոր հագուստի մէջ ոչ թէ մայրս, ոչ թէ տէր Թոդիկը, այլ սատանան եւս չէր կարող ճանաչել ինձ: Ես այժմ իմ հագուստով բոլորովին նման էի ընկերներիս:

— Դէ՛, նստիր, — ասաց Կարօն, ինքն նոյնպէս իր ձին հեծնելով:

Ասլանը եւ Սագօն արդէն ձիաւորուած էին: Մենք ճանապարհ ընկանք: Երկու զեյթունցիները մնացին միներեթի մէջ, երեւի, այն պատերազմական մթերքը պահելու համար, որը ես ցերեկով տեսել էի աշտարակի վերին յարկում:

Արեգակի վերջին շառաւիղները դեռ խաղ էին անում միներեթի կապոյտ մոզայիկների հետ, երբ մենք բաժանուեցանք այդ հսկայ շինուածքից: Ես իմ ստացած նոր ընծաներով այնքան գրաւուած էի, մինչեւ անգամ ընկերներիցս չհարցրի, թէ ո՞ւր ենք գնում: Իմ գեղեցիկ նժոյգը ընթանում էր արագ, որպէս մարդու միտքը. իմ զէնքերը շողշողում էին փառաւոր, սպառնական լուսով:

Կարօն չսխալուեցաւ իր կարծիքի մէջ, այո՛, ես այնքան հմուտ էի զէնքերի գործածութեան մէջ, որքան ձի հեծնելում: Շատ քիչ էր պատահում, որ իմ գնդակը շեղուէր նպատակից, որովհետեւ ես որսորդ Աւօյի թէեւ փոքրիկ, բայց լաւ աշակերտն էի, — աշակերտը այն մարդու, որի անուան հետ կապուած էին այնքան սարսափելի պատմութիւններ...: Բայց նա մնաց միշտ բարի դէպի ինձ եւ դէպի մեր ընտանիքը: Նրա տնում միշտ գտնւում էր իմ համար մի աւելորդ հրացան, որով ես փորձեր էի անում: Առաջին փորձը արեցի մեր հաւերի վրայ. մայրս ինձ շատ անիծեց, երբ տեսաւ, որ իր սիրելի վառեկներից մէկը թաւալւում էր մեր բակի մէջ: Նա իսկոյն վազեց վարժապետի մօտ բողոքելու...

Իսկ երբ որսորդը իր ընտանիքով թողեց մեր քաղաքը, մայրս մասամբ ուրախ էր, որ ազատուեցաւ մի այսպիսի դրացուց, որը նրա կարծիքով, իր որդուն փչացնում էր, խելքից հանում էր: Բայց ես երկար չէի կարող մոռա-